ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից իրականացվող «Տարվա լավագույնները» 2022

մրցույթի նրկայացվող ծրագրի սեղմագիր

Ծրագրի անվանումը	«Այլընտրանքային դասալսումներ»
Անվանակարգը	Հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն
Ծրագրի ընդհանուր նկարագիր	Ծրագիրը միտված է փոխել դասալսումների վարչական բնույթն այն դարձնելով հետքարքիր, ինտերակտիվ, զարգացնող համագործակցային գործընթաց։ « Այլընտրանքային դասալսումները» փոխելու է դասալսումների մասնի առկա թյուր պատկերացումները՝ դասալսումները դարձնելով ստեղծարար, գրավիչ, համագործակցային գործընթաց։ Ապահովելու է մանկավարժների առավել սերտ շփումը, միևնույն ժամանակ զինելու է նրանց ժամանակակից մանկավարժական մեթոդներով, նպաստելով աշակերտների ակադեմիական և վարքային առաջընթացին։ Ծրագրի իրականացման ընթացքում ուսուցիչներն անցնելու են գործընկերային ուսումնառության և ինքնուրույն ուսումնառության փուլերով: Գործընկերային ուսումնառության ընթացքում սովորելու են հետադարձ կապ տալու սկզբունքները, ինքնապաշտպանման 4 մեխանիզմները, հետադարձ պլանավորման նրբությունները, ներմուծվելու են դասալսման մի քանի գործիքներ՝ դասալսման ռուբրիկ, քոուչինգ դասալսման ձևաթուղթ, ինքնաանդրադարձի ձևաթուղթ։ Նաև կիրառվելու են նոր, այլընտրանքային մեթոդներ ինչպիսիք են ● «Համագործակցային զույգ» ● «Դասի ուսումնասիրում» ● «Մանկավարժական ճամփորդություն» ● «Քոուչինգ դասալսում» ● «Գործողության Հետազոտություն» Գործընկերային ուսումնառության փուլում ամեն ինչ սովորելու ու կիրառելու

	գործընկերների հետ: Բոլոր մեթոդների և գործիքների կիրառմամբ ակնկալվող հմտությունները ձեռք բերելուց հետո յուրաքանչյուր ուսուցիչ անցնում է ուսուցչի ինքնուրույն ուսումնառության փուլը՝ «Գործողության Հետազոտություն» մեթոդի միջոցով, սա հնարավորություն կտա ամբողջ սովորածը կիրառել ինքնուրույն՝ պարզելով սեփական աճի մակարդակը:
Ծրագրի նպատակ և խնդիրներ	**Նպատակը** Դասալսումներն դարձնել ստեղծարար և համագործակցային գործընթաց՝՝ նպաստելով դասերի որակական փոփոխությանը,մանկավարժների մասնագիտական աճին: Խնդիրները ● Իրականացնել գործընկերային ուսումնառություն ● Ներկայացնել ուսուցիչներին կիրառվող գործիքակազմը ● Յուրաքանչյուրին տրամադրել կիրառվող գործիքները ● Զարգացնել հետադարձ կապ տալու հմտությունները ● Ներկայացնել կիրառվող մեթոդների ● Կազմել աշխատանքային գրաֆիկ և խմբեր ● Կիրառել գործիքկազմն ու մեթոդները, վերլուծել արդյունավետությունը ● Իրականացնել ինքնուրույն ուսումնառություն, կազմելով «Գործողության հետազոտություն» պլան

Ակնկալվող արդյունքներ	Կկիրառենք ● Դասալսման ռուբրիկը ● Ինքնաանդրադարձի թերթիկը ● Քոուչինգ դասալսման ձևաթուղթը Կունենանք ● Տարատեսակ տեխնիկաների կիրառությամբ դասալսումներ և քննարկումներ ● Սերտ համագործակցային մթնոլորտ ● Մշտապես կատարելագործման ձգտող ուսուցիչներ ● Խմբային և անհատական հանդիպումների հնարավորություն Կկարողանանք ● Տալ կառուցողական հետադարձ կապ՝ «սենդվիչի» սկզբունքով ● Իրականացնել ինքնավերլուծություն ● Դուրս բերեն բարելավման ուղղություններ ● Մշակել բարելավումն ապահովող քայլաշար ● Իրականացնել և՝ համագործակցային, և ինքնուրույ ուսումնառություններ ● Իրականացնել «Գործողության հետազոտություն»,հետադարձ պլանավորում
Ծրագրի իրականացման պլան	Ծրագրի մեկնարկը տրվելու է 2022 թվականի հոկտեմբերին։ Ծրագրի քայլաշարի մանրամասներին ծանոթնալ անցնելով այս հղումով **1.Նախապատրաստական փուլ (Համագործակցային)** **սեպտեմբերի 23 - հոկտեմբերի 30** Այս փուլում իրականացվելու է ուսուցիչների հինգօրյա վերապատրաստում, որի ընթացքում ծանոթանալու են 1. Գնահատման սանդղակին 2. Հետադարձ կապ տալու սկզբունքնեՁին

	3. Քննադատությունից պաշտպանվելու 4 ռեակցիաների 4. Ինքնաանդրադարձի թերթիկի կիրառման մանրամասներին 5. «Համագործակցային զույգ»,,«Մանկավարժական ճամփորդություն»,«Դասի ուսումնասիրում»,«Քոուչինգ դասալսում», «Գործողության հետազոտություն մեթոդների նրբություններին: Դասընթացի սահիկը **2. Մեթոդների և գործիքների կիրառության փուլ (Համագործակցային)- 2022 թվականի նոյեմբեր - 2023 թվականի մայիս** Այս փուլում հաստատությունում կիրառվելու են դասալսման այլընտրանքային մեթոդներ և մի քանի նոր գործիքներ ըստ կազմված գրաֆիկ, պարբերաբար քննարկում են արդյունքները փոքր և մեծ խմբերով **3.Ուսուցչի ինքնուրույ ուսումնառության փուլ- (Ինքնուրույն)** **2023 թվականի ապրիլ-- մայիս** Բոլոր մեթդների և գործիքների կիրառմամբ ակնկալվող հմտությունները ձեռք բերելուց հետո յուրաքանչյուր ուսուցիչ անցնում է ուսուցչի ինքնուրույն ուսումնառության փուլը՝ «Գործողության Հետազոտություն» մեթոդի միջոցով, սա հնարավորություն կտա ամբողջ սովորածը կիրառել ինքնուրույն՝ պարզելով սեփական աճի մակարդակը **4Անդրադարձի, արդյունքների ամփոփման փու (Համագործակցային և ինքնուրույն)** **2023 թվականի հունիս** Այս փուլի ընթացքում ընթացքում իրականացվում են բոլոր մեթոդների, գործիքների արդյունավետության քննարկում՝ հիմք ընդունելով արձանագրությունները, ընթացիք քննարկումները ուսուցիչների կարծիքները: Ուսուցիչներն ինքնուրույն վերլուծում են նաև իրենց կատարած աշխատանքի արդյունքները **5.Հետադարձ պլանավորման փուլ -(Համագործակցային, ինքնուրույն)** **2023 մայիս- հունիս** Հաշվի առնելով նախորդ փուլի քննարկումները, դուրս բերելով բոլոր գործիքների առավելությունները և թերությունները, պլանավորում ենք հաջորդ տարվա մեր անելիքները: Մասնավորապես՝ մշակում ենք քայլեր, որոնք կնպաստեն առկա թերությունների վերացմանը, դասալսումների արդյունքներից եզրահանգումներ կատարելով նշում ենք դասավանդման

	հմտության խոցելի կողմերը և մշակում դրանք վերացնելու քայլեր:
Շարունակականության ապահովում	Այս մեթոդների և գործիքների կիրառությունը դառնալու է մեր հաստատություն աշխատանքային հիմնակա բաղադրիչներից մեկը և բոլո ուսուցիչներ ներգրավվել ու են գործընթացին: Հաջորդ ուսումնական տարում, ավելացվելու են կիրառվող տեխնիկաը: Շարունակականության համատեքստում նախատեսում ենք գործիքների կիրառությունը ներդնենք ևս մեկ դպրոցում՝ ըստ ցանկության: Ծրագրի վերջին փուլի վերլուծությունները ինքնին ապահովելու է շարունակակաությունը, քանի ,որ հաշվի առնելով արձանագրված բացթողումները հաջորդ տարում նախապատրաստելու և իրականացնելու ենք բացահայտված թերթությունները վերացնելուն ուղղված հասցեական աշխատանքներ
Ծրագրի սահիկաշար *(կցել ակտիվ հղումը)*	Սահիկաշար

***Ծանոթություն**

Ծրագրի սեղմագրի ընդհանուր ծավալը չպետք է գերազանցի 5 էջը:

Ծրագրի սահիկաշարը հղման տեսքով ներկայացնելը պարտադիր պահանջ է:

Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչվելու դեպքում՝ ծրագրի սահիկաշարը ենթակա է հրապարակման: